ԱՐՑԱԽՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ՆՈՐ ԾՈՒՂԱԿՆԵՐԸ

ԵԱՀԿ Մինսկի խմբում Ռուսաստանի նոր դերակատարումը

ՆԱՐԻՆԵ ԴԻԼԲԱՐՅԱՆ

Արցախյան հիմնահարցի կարգավորման բանակցային գործընթացը որոշ սառեցումից հետո վերստին ակտիվանում է: Հայաստանում նախագահական ընտրություններն ավարտվել են, Ռոբերտ Քոչարյանը կրկին նախագահի պաշտոնում է, այսինքն բանակցային մեր կողմի դերակատարն անփոփոխ է, ուստի պետք է ամեն կերպ անփոփոխ պահել ադրբեջանական կողմի թիվ մեկ դերակատարին Հեյդար Ալիեւին կամ նրա պաշտոնական իրավաժառանգորդ, արդեն Ադրբեջանի վարչապետ Իլհամ Ալիեւին, որպեսզի հանկարծ ԵԱՀԿ Մինսկի խմբի ղեկավարած բանակցությունները դարձյալ չբախվեն խութերի: «Նոր մարդ նոր խոչընդոտներ» հայտնի ճշմարտությունը ստիպում է Մինսկի խմբի եռանախագահության անդամ պետություններին ԱՄՆ, Ֆրանսիա, Ռուսաստան, եռանդուն դիվանագիտական գործունեություն ծավալել ի զորակցումն Հեյդար Ալիեւի:

Այս զորակցումը հատկապես անթաքույց եւ ազդու սկսել է Ռուսաստանը: ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը Իլհամ Ալիեւին ցուցադրական ջերմությամբ ընդունեց, ռուսաստանյան լրատվամիջոցներն անմիջապես շրջանառության մեջ դրեցին Պուտինի հավաստումը, որ Ադրբեջանը Ռուսաստանի ռազմավարական գործընկերն է Կովկասում:

«Իզվեստիա» թերթը, որն ամենաազդեցիկներից է, եւ միշտ համարվել է նախագահական քաղաքականության կրողը, անընդմեջ գովաբանական հոդվածներ է տպագրում Ալիեւների ընտանիքի մասին, բայց դրա հետ մեկտեղ Հայաստանի դերի նսեմացման միտում է նկատվում եւ ոչ միայն հիշյալ թերթում: Ընդ որում բոլոր սլաքներն ուղղվում են դեպի Լեռնային Ղարաբաղ, ռուսական քաղաքական գործիչներն իրենց ադրբեջանցի գործընկերների հետ փորձում են բոլորին, հատկապես Հայաստանին համոզել, որ մեր բոլոր դժվարություններն արդյունք են Արցախյան հակամարտության չկարգավորման: Այս քարոզչական պատերազմում Ռուսաստանն իրեն դաշնակից է ընտրել նաեւ Արեւմուտքին: Այսպես սեպտեմբերի 19-ի «Իզվեստիայի» համարում հեռուն միտված եզրակացություններով հիշատակված է արեւմտյան գործիչներից մեկի պնդումը. «Հայաստանը հաղթեց ռազմադաշտում, սակայն պարտվեց Ադրբեջանին մնացյալ բոլոր ճակատներում»:

Հայաստանին վերաբերող բոլոր հարցերում Ռուսաստանը դարձել է բավական խիստ, անգամ «գույք՝ պարտքի դիմաց» գործարքը, որի արդյունքում Ռուսաստանին տրվեցին եւ տրվում են Հայաստանի էներգետիկ եւ ինտելեկտուալ ոլորտի որոշ ձեռնարկություններ, կասկածալի քննադատության արժանացավ: Այն աստիճան, որ ՌԴ-ում ՀՀ դեսպան Արմեն Սմբատյանը ստիպված էր «Նեզավիսիմայա գազետայում» արդարանալ, թե մենք ըստ էության Ռուսաստանին չենք խաբել եւ անպիտան գույք ենք տվել այդ 100 մլն դոլարի հասնող բնավ ոչ մեծ պարտքի դիմաց: Այս համապատկերում պետք է գնահատել ԵԱՀԿ Մինսկի խմբի ռուսաստանյան նախկին համանախագահ Վլ. Կազիմիրովի հայտնի հոդվածը «Բանակցությունները չպետք է դոփեն տեղում», որին մենք արդեն անդրադարձել ենք:

Ակնհայտ է, որ ներկա փուլում Ռուսաստանը փորձում է ուժեղացնել իր դիրքերը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների կազմում Արցախի հարցի կարգավորման նախաձեռնությունն ու սանձերն իր ձեռքը վերցնելով: Այս կերպ Ռուսաստանը ձգտում է վերահաստատել Հարավային Կովկասում իր աշխարհաքաղաքական դիրքերը դիվանագիտորեն հասկացնելով ԱՄՆ-ին եւ Ֆրանսիային, որ ինքն է վերահսկում եւ կարգավորում իրավիճակն այս տարածաշրջանում: Ռուսաստանն առաջարկում է ապառազմականացնել իրենց բնորոշմամբ գրավյալ տարածքները, որից հետո միայն նոր բանակցային ձեւաչափով, որտեղ կլինի նաեւ Ղարաբաղյան կողմը, սկսել Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի վերաբերյալ բանակցությունները: Այս ամենը ոչ դիվանագիտական լեզվով նշանակում է հակամարտության կարգավորման փուլային տարբերակ, նախ ազատագրված տարածքների վերադարձ Հայաստանի կողմից, ապա Լեռնային Ղարաբաղի կարգավիճակ: Ռուսաստանն իրատես է եւ հասկանում է, որ փաթեթային լուծման այսօր գրեթե անհնար է հասնել, եւ խնդրի հանգուցալուծումը դարձյալ կհետաձգվի, որի արդյունքում իր դիրքերը Հարավային Կովկասում կարող են ավելի թուլանալ:

ՌԴ-ն չունի ներդրումային, ֆինանսական մեծ միջոցներ, որպեսզի կարողանար նման ձեւով գրավել տարածաշրջանը, փոխարենը Արեւմտյան Եվրոպան ու ԱՄՆ-ը տնօրինում են նման միջոցներ: Հետեւաբար պետք է շտապել Հայաստանի կողմից վերահսկվող տարածքներում առավելապես ռուսական ուժերով ապառազմականացում կատարել, իսկ Արցախի կարգավիճակի հարցը կսպասի:

Բացի այդ, հանձնելով Քելբաջարը, Ֆիզուլին, Ղուբաթլուն, Զանգելանն ու Աղդամը, միջազգային վերահսկման ենթարկելով Լաչինի, գուցե նաեւ Մեղրիի միջանցքները Հայաստանն ու Արցախը, զգալով իրենց շրջափակման մեջ, ստիպված կլինեն ավելի զիջող դառնալ: Այստեղ են բանակցային ծուղակները մեզ համար:

ՀՀ արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանն արդեն հայտարարել է, որ քիվեստյան եւ փարիզյան սկզբունքները վերածելվել են, բանակցային սեղանին դրվելիք նոր սկզբունքներն իրեն բնորոշ պատկերավորությամբ Վարդան Օսկանյանը կոչեց «հինին նորը», իսկ հինը հակամարտությունների կարգավորման փուլային սկզբունքն է: Ի դեպ, օրերս Հայաստանում գտնվող ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանը եւս չբացառեց փուլային տարրերով համանախագահների նոր առաջարկների ներկայացումը:

Տարածքների վերադարձը, սակայն, այնքան էլ դյուրին խնդիր չէ, եւ կարող է մեծապես ապակայունացնել Հայաստանի ու Ղարաբաղի ներքաղաքական իրավիճակը, հետեւաբար պետք են հանձնման սցենարներ, որոնցից մեկի մասին գրեց ադրբեջանական «Զերկալո» թերթը:

Կարգախոսում

Ըստ այդ սցենարի՝ ներկա ռազմական լարվածությունը հայ-ադրբեջանական եւ Արցախ-ադրբեջանական սահմաններում կարող է ավարտվել ռազմական գործողությունների կարճաժամկետ բռնկմամբ, որի արդյունքում Հայաստանը Ադրբեջանին կզիջի որոշ վերահսկվող շրջաններ: Ալիեւ -Քոչարյան համաձայնությամբ կայացած նման փոխզիջումը, ըստ ադրբեջանական աղբյուրների, թույլ կտա Ալիեւների կլանին ամրացնել իր դիրքերը, Քոչարյանին ստանալ Հայաստանի ապաշրջափակում, նավթային տարանցիկ փոխադրումների ծրագրերում ներգրավվելու հնարավորություն, իսկ ՌԴ-ին, ԱՄՆ-ին եւ Եվրոպային՝ վերադարձված տարածքներում իրենց ուժերի տեղակայում:

Նման սցենարների մշակումը, ասպարեզ նետումը մտնում են ընդհանուր խաղի կանոնների մեջ ստուգել հանրության արձագանքը, ստանալ զարգացումների տարբերակները: Հայաստանի եւ Արցախի համար այս իրադրության մեջ կարեւորը չենթարկվելն է գայթակղություններին, անսքող սպառնալիքներին, որ հնչում են անգամ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների տարբեր աստիճանի պաշտոնյաների շուրթերից, նրանց մամուլից: Սցենարն ակնհայտ է, «Իզվեստիայի» մատուցմամբ. «Ադրբեջանն առավել սրընթաց վերածվում է ողջ մերձկասպյան տարածաշրջանի աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական կենտրոնի, իսկ Հայաստանը նույնքան սրընթաց գլորվում է ինքնամեկուսացման եւ տնտեսական ավտարկիայի ճահճուտը»:

ՀՀ Աժ նախագահը պատրաստվում է ՌԴ մեկնելու, ՀՀ արտգործնախարարը հայտարարում է համանախագահների հետ մոտալուտ հանդիպման մասին: Արժե հիշեցնել նրանց հին թեւավոր ասույթը՝ վախեցեք ընծաներ բերող դանայացիներից: Մեր դեպքում դրանք տնտեսական բարգավաճման խոստումներն են եւ ժողովրդավարական չափանիշներից ակնհայտ շեղումների առժամանակ անտեսումը: